

## ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ՎԱՀԱ-ՎԱՀՅԱՆ, «ՀԱՐՈՒԵԶՆԵՐՈՒ ՀԱՇՏՈՒԹՅՈՒՆ»

1953 թվականին  
թերությում, «Անի»  
ամսագրի հրատարա-  
կությամբ, լույս տի-  
սավ սփյուռքահայ  
տաղանդավոր բանա-  
ստեղծ Վահա-Վահյանի  
«Հարավելերու հաշ-  
տորյունը» գիրքը:


1946 թվականին  
Հայաստանի սովետա-  
կան գրողների միու-  
թյան 2-րդ համագու-  
մարին, սփյուռքահայ  
մեր բազմաթիվ գրող-  
ների հետ միասին,  
հրավիրված էր նաև  
բանաստեղծ Հեղինա-  
կը: Գրախոսվող ներ-  
կա գրում Հեղինակը  
ամփոփել է Հովհերի և  
գեղեցիկ տպավորու-  
թյունների այն շարա-  
նը, որ նա ստացել է  
Մայր Հայրենիքից, իր  
այնտեղ գտնվելու օ-  
րինին:

Գիրքը, բաժանվում է վեց գլուխների, ո-  
րոնցից յուրաքանչյուրը, իր հերթին, բա-  
ժանվում է առանձին ենթագույնների:

Գրքի առաջին մասը վերնադրված է «Ճամ-  
րան՝ դեպի Հայրենիք»: Այսակա Հեղինակը  
մեծ հույզով տալիս է 1946 թվականին սկսած  
Հայրենադարձությունը՝ համարելով այն Հայ  
ժողովրդի բազմազարյան հարածական կյան-  
քի մեջ տեղի ունեցող մեծագույն իրադար-  
ձությունը. «Ներգավթ... բառը կախարդանքի  
մը պես գրավեր էր Հովհենները, իջեր էր մար-  
դուց սիրտին ու միտքին մեջ», — գրում է Հե-  
ղինակը: Զարդինել էր նորից մեր տարագիրը  
ու պանդուխա ժողովրդի դարավոր ասողը  
ընազդը, այն է՝ զառնալ իր մայրենի երկիրը,  
իր հոգով ու ջրով մի հավաքական ամրող-  
ջություն դառնալու համար:

Եվ աշա ինքը, Հեղինակը, Հայրենադարձ-  
ների 5-րդ նամի մեջ է: Մանրամասն նկա-  
րագրված են ճանապարհորդական տպավո-  
րությունները, ծանոթ, անձանոթ դեմքերի  
հետ իր հանդիպումները, խոսակցություննե-  
րը նամի վրա:

Ծուռով Հայրենադարձների նամը մանում  
է Դարդանելի ջոկերը: Անա՛ և Բոսֆորը, Պո-  
լիսը: Հայ աղետի, մղձավանդային օրերի



տխուր հիշողություն-  
ներն են զարթնում  
Հայրենասեր բանա-  
ստեղծի արտում...

Նավը արդին Սկ ծո-  
վումն է: Ահա՛ և Բա-  
թումիի նավահանգիս-  
տը: Դիմավորողների  
ձայնները, նվազավաճրի  
ուրախ հնչյունները,  
Հայրենադարձ պան-  
դուխանների ողջադու-  
րումները, ուրախու-  
թյան և կարոտի սրբ-  
աշարժ տիսարաննե-  
րը պահը դարձրել են  
հոգիչ ու վեհ. «Այդ  
պահուն, ձայնները  
մրմունջներ էին միայն,  
ու նայմածքները՝ ար-  
ցունք (էջ 23):

Սկսում են առա-  
ջին ծանոթությունները  
կովկասահայերի հետ,  
պատույտներ և շրջա-  
գայություններ Բա-  
թումիում, գնացքով  
սվեճորություն գեպի

թրիլիսի և ապա երեան:

Համնում է վերջապես երեան: — Ահա քա-  
ղաքային կայարանը, Լենինի Հրատարակը,  
Կառավարական տոմար, Արովյան պողոտան:  
Ռիսավորի ծարաված Հայացքներով է բա-  
նաստեղծը ընկալում ամեն մի շենք, ծառ,  
արձան: Նրա մոտ անդամ Հայրենիքի արեն  
ուրիշ տեսակ է՝ «անուշ, գգլող ու բարի»  
(էջ 59): Հարազատ է Հայրենի երկնակամա-  
րը: Մի նոր կենարար շունչ պարուրում է նրա  
ողջ էությունը. «Կզգայի, — գրում է նա, —  
թե երկնարար մեջն կանցներ ուժ մը՝ որ  
անձանոթ էր մնացեր ինձի մինչև այն ատեն»  
(էջ 59): Մի պահ բանաստեղծը երեանի  
բանուկ փողոցների եսուսենի մեջ է, իր հայ-  
րենակիցների հետ: Այժմ ամեն ինչ Հարա-  
զատ է թիւմ նրան, չկա ոչինչ անսովոր  
կարծեք. «Դարավոր թափառությունների վերջ,  
հոգիս վերադարձեր էր կարծես իր բնավայ-  
րը, ուր ամեն բան նոր՝ բայց և չին էր ու  
մտերիմ» (էջ 63):

Այսուհետեւ Հեղինակը մանրամասն պատ-  
մում է իր տպավորությունները երեանում  
անց կացրած առաջին դիշերվա, սովետահայ  
մի քանի գրողների ու քննադատների հետ  
ունեցած հանդիպումների, արտասահմանյան

Հայ գրականության շուրջ կարծիքների փոխանակության մասին և այլն:

Բանաստեղծը սրտի անհուն բերկրանքով ու հպարտությամբ է լցված, երբ տեսնում է իր Հայրենիքի եռուն շինարարությունը, նրա ծաղկուն վիճակը: Նրա համար հաղթանակի, հուրդի ու խինդի կոթողներ են «Արարատ» գործարանը, Կառավարական տոմար, Օպերան, Հաղթանակի կամուրջը և այլն: Բանաստեղծի սահուն գրչի տակ ամեն ինչ կենդանանում է, խոսում նրա հետ, և ամեն ինչի մեջ իմաստավորվում է Հայրենիքի շուրջ: Ահա՝ Հրազդանը, որի փրփուները ունին խոռվքը Արովանի հոգիին...»: Հրազդանը «ավանդապահն է դեռ զգրված մեր պատմության՝ վկան՝ մեր խոյանքներուն, ու խնդակիցը՝ մեր հաղթանակին» (էջ 78): Եվ ո՞չ միայն հայրենի բնությունը, երկիրը, այլև այդ բոլորին շունչ տվող հայրենի երկրի մարդը նոր են նրա համար, մինչ այդ շտեսնված: Նա սրտարաց է, հուրդընկալ, անմիջական ու լավատես: Նոր աշխարհի նոր մարդիկն են նրանք՝ կյանքի խիզախումով ու վերելով խանդավառված: Եվ՝ Մշակութային կապի գրասենյակում, և՝ փողոցում ու գործարանում, ամեն քայլափոխին նա հանդիպում է սովետական նոր մարդկանց՝ աշխատանքի աշխուժով լցում, կենսախինդ մարդկանց, որոնք վայելում են իրենց խաղաղ կյանքի վայելքը: Եվ հեղինակը կարծես մանկանում է նորից, ապրելով մի նոր սկսվող կյանքով, շրջապատված այդ հարազատ ու սիրելի դեմքերով:

Այդ նույն վերնագրի տակ հեղինակը բավական տեղ է հատկացնում իր այցելությանը Սևան: «Դեպի Սևան», «Առաջին գիշերը», «Սևանի առավոտը», «Սևանա կղզին», «Սևան լիճը» ենթավերնագրերի տակ տաղանդավոր հեղինակի գրչի տակ ոդի և կյանք են տուել հայրենի բնության հրաշալիքները: Մեր արձակի մեջ Սևանա լճին նվիրված, բանաստեղծական ամենավառ հույզերով, բնանկարի ամենանուրբ երանքներով նկարված լավագույն տողերը կարելի է համարել Վահե-Կահյանի նկարագրությունները (տե՛ս էջ 92—104): Եվ դրանք լոկ բնության նկարագրությունները չեն, այլ՝ իսու և երազ: Սևանը, բանաստեղծի համար բնության հրաշալիք լինելուց առաջ, հայ պատմությունն է, լուս է, իրականությունն ։ Այս հոյական էր ան: — Կենալ հողի մը վրա, որուն մեջ կա քեզմե մաս մը, նայիլ շուրջիդ քարերուն, լեռներուն, և զգալ թե անոնց վրային կանցնի շունչ մը՝ որմե կա հեք մը քու սեփական շունչիդ ալ մեջ. գիտնալ թե պատմություն ունիս, և գուն մեկ մասն եւ

այդ պատմության... Հոյակա՝ պ էր, աշխարհի ամբողջ գանձուլը անդնելի» (էջ 97):

Նորանոր ապրումներ է ունենում հեղինակը Սևանա կղզու վրա: Նա մի անգամ ևս համոզվում է, որ հայ ժողովորդը գիտե պահել իր դարավոր արժեքները: Խնամքով վահաճանլող եկեղեցիները, խաչքարերն ու արձանագրությունները, քանդակազարդ բեկորները ապացուցն են այն բանի, որ մեր ժողովուրդը «ազնվացուցիչ» պաշտամունքնի իր հնադարյան «արժեքներուն հանդեպ»:

Այսուհետև սկսում են բանաստեղծ-գրողի այցելությունները զանազան հասարակական վայրեր: Նա ներկա է լինում Ֆիլհարմոնիայի: «Համերգին, այցելում է դպրոցները, հրապարակները, այդիները և ամենուրեք բանաստեղծ-դիտողը տեսնում է այն նորն ու գեղեցիկը, որը նվաճել են Հայրենիքի անխոնջ զավակները՝ հաստատուն կամքով ու արիությամբ: Նրա շուրջն են ամենուրեք սովորական պարզ, հասարակ մարդիկ, մեր կայտառ ու ժիր երեխանները: Մանովից մինչև ծերունին տարված են աշխատանքի ստեղծագործական եռուվեռով: Եվ նա, պանդովստ բանաստեղծը, խոսում է այդ մարդկանց հետ: Նրանցից շատ շատերը տեսել են աշխարհավեր երկու պատերազմները: Հրից ու բոցից ազատվելով, մահվան ծանր մրցավաճախին օրերից հետո, նրանք իրենց հարազատ Հայրենիքի կապույտ երկնքի տակ այժմ կառուցում են մի նոր աշխարհ:»

Ստեղծագործ է հայ ժողովրդի խորունկ հոգին: Ահա՝ երևանի Օպերան, որ հավատենական մի կոթող է հայ ժողովրդի ստեղծագործ ու ուսումնական մի վրա: Տիգրան Չուփանցյանի «Արշակ երկրորդը»: Դերասանների ինչպիսի տաղանդավոր խաղ, ինչպիսի՝ գեղեցիկ բեմահարարում, աննման դասական երաժշտություն: Եվ այս բոլորը ականատես հեղինակին տեղափոխում է երազների վեհատեսիլ հեքիաթային աշխարհը: Բայց նա չեսավանուած օդեղեն երկնքում: Նա շատ լավ դիտե, որ եթե շինեին սովետական կարգերը, այդպիսի բարգավաճումների անկարելի էր հասնել:

Ահա՝ կերպարվեստի ցուցահանդիսը, ուր ուղուների կախարդական երգիլը՝ Մարտիրոս Սարյանը մրցում է բնության հետ. «Ահա՝ երևանի թանգարանը, Գրողների տունը, Կերպարվեստի պետական թանգարանը. Հայաստանում ամենուրեք ծաղկում են արվեստները, գիտությունն ու մշակույթը»: Հարակեղները հաշտվել են և կենդանի է հայ ժողովրդի հերոսական ոգին: Եվ գեղեցիկության ստեղծուածին նվիրված հենց այդ «հայ հոգին» իրան հակատագիր ունեցեր էր շատ ան-

դամ օտարության ցավն ու մահվան մղձավանջը, ճիմա, աղատ ու արևոտ մեր Հայրենիքին մեջ, գտեր էր մեծարանքն իր ժողովուրդին և Հովանին իր պետության...» (էջ 178):

Գրիփի երրորդ մասը վերնագրված է «Գրողներու համագումարը»: Այս գլխում մանրամասն նկարագրված են 1946 թվականի սեպտեմբերի 25—27-ին տեղի տևնեցած Հայաստանի սովետական գրողների միության երկրորդ համագումարի նիստերը: Հեղինակը ընթերցողին մեկ առ մեկ ծանոթացնում է Հայաստանի աշխի ընկնող սովետական գրողների հետ, տալիս է զեկուցումների ամփոփ բովանդակությունները, մեջ է բերում համագումարում իր կարդացած զեկուցումը, որը մի ամփոփ ընդհանրացումն է արտասահմանյան հայ գրականության անցած շրջանների և գրական ներկա ուղղությունների:

Հեղինակը Հայաստանի սովետական գրողների միության երկրորդ համագումարում շոշափված ընթանուր հարցերից գալիս է մի ընդհանուր եղբակացության, «Մինչև ամբողջական իրականացնումը Հայրենի հողին վրա միաձուված մեկ ժողովուրդի և մեկ գրականության իդեալին, պանդուստի ճակատագիրով մը երկնվող մեր գրականության կեցուցի միակ ուժը կրնա բխիլ Մայր Երկրի մեր ժողովուրդին և անոր մշակույթին հետխորունկ, աննախապաշար ու սրտանց հաղորդակցութենեն» (էջ 200):

Այնուհետև զալիս է չորրորդ ընդարձակ գլուխը՝ «Ոզի և լյանե» վերնագրված: Այսուեղ, ինչպես հաջորդ գլուխներում, ամփոփված են Հեղինակի այն տպավորությունները, որ նա ստացել է զանազան այցելությունների և հանդիպումների ժամանակ:

Այսպես, «Լարվետին տունը և Յ-րդ համագումարը» ենթավերնագրի տակ նկարագրված է գրողների այն սրտառուց ընկերական համագույթը, որը տեղի է ունեցնել Վարպետի (Ավետիք Խսահակյան) հրավերով, իր տանը: Նվագի, պարերի, կենացների սրտագին ուրախություններով լիցում գեղեցիկ այդ երեկոն, որին ներկա է եղել ինքը Հեղինակը, նրա «Հայրենական օրերու անուշ ապրումներից են, քանի որ այդ հավաքութներում ստեղծած եղբայրական մինուրաբին մեջ, կրացվեին հոգիները, և շրթունքները կը լային ճամբան՝ ամենեն վժիտ և ինքնայտ զգացումներուն...» (էջ 230):

Ապա տրված են մի շարք բովանդակալից և համոզեցուցիչ նկարագրություններ՝ դիտության, արվեստի, աշխատանքի և գյուղատնտեսության մարզերում կատարած իր մի շարք այցելությունների մասին:

Անհրաժեշտ է նշել, որ վահե-Վահյանը կարուղանում է ըմբռնել իրերի և երևոյթների խորքը և մի շարք ընդհանրացումներից Հետո ընթերցողին հրամցնել մի այնպիսի եղանակություն, որն աներկայելիորեն ճշշմարփակ է իրերի և երևոյթների խելացի ուսումնասիրությունից: Այսպիսի հայ տպագիր գրքի ցուցահանդեսը տեսնելուց հետո, նա հանգում է հետևյալ ճշգրիտ եղանակության: «Ինչ որ էապես կար անշարժ ու անշունչ այդ գիրքերուն մեջ, ոգեզեն էություն մըն էր, անոնց շրացված էջերին իսկ մեկի խոսուց: Զէ՛ որ աշխատանքին և ապատության սերին հետ հոգեկան լույսին պաշտամունքը եղեր էր դավանանքը մեր ժողովուրդին...» (էջ 237):

Հայրենասեր գրողը լինում է Պետական համաշխարանում, Գիտությունների ակադեմիայում, ժանոթանում է անվանի հայ գիտականների հետ: Հեղինակը աննման հիացմունքով է խսում ուսումնաշատարագրական կականական և մասին կականական կարգավորություններում և խսում ուսումնաշատարագրական կականական կարգավորություններում: Նա բերում է թվեր և փաստեր, որոնք անվիճելի ցույց են տալիս այն մեծ առաջադիմությունն ու զարգացումը, որ ձևոք է բերել մեր Հայրենիքը:

«Առողջապահությունը Սովետական Հայաստանի մեջ» ենթավերնագրի տակ հեղինակը մանրամասն թվերով ու փաստերով շարադրում է այն հոգատարության մասին, որ ցուցաբերում է Սովետական կառավարությունը աշխատավորների նկատմամբ:

Հեղինակը լինում է Պետական հանրային գրադարանում, Պետական ձեռագրատանը, Պատմական թանգարանում, Երկրաբանական թանգարանում, Արովյանի տուն-թանգարանում, ամենուրեք առաջադիմություն, կարգ ու կանոն, լավագույն պահպանումն մեր ազգային դարավոր արժեքավոր ժառանգությունների և գլխավորը՝ աշխատանքի ու վերելքի մասսայական խանդակառություն:

Ապա հեղինակը տալիս է մի քանի պատմական վայրեր կատարած իր այցելությունների գեղեցիկ նկարագրությունները: Ընթերցողի աշխի առջեկից կինոժապավենին նման անցնում են հայ շինարար ժողովրդի դարավոր կառուցողական գեղեցիկ՝ արվեստի նմուշներ: Գառնիի, Գեղարդի հնագարյան տաճարների մասին հպարտանքով է խսում Հեղինակը, միացնելով դրան իր բուռն հայրենասիրությունը: Ամեն մի քանդակի, ամեն մի քար ու թուղթ կենդանի վկաններին են հայոց պատմության տիպուր և փառավոր էջերի, նրանք խոսում են հեղինակի սրտի ամենա

նույր լարերի հետ: Օդեղեն են դառնում հեղինակի խոսքերը, հուզիչ ու արտամաթախիծ, երբ խոսում է հայի անցյալի արյունու իրականության մասին. «Ներքին արամություններ շատ են տեսեր այս վայրերը—դեղինը մաղձին ու մուրը վատության...: Այստեղին անցեր է օտարը, ոև հեղիդի մը պես իր հորձանքին մեջ առնելով ծերն ու մանուկը, ծառն ու ծաղկեց» (էջ 327):

Սակայն, «Մեր պատմությունը... եղերական՝ որքան դուցազնաշունչ, մոռալ՝ որքան պայծառ: Լուսով շաղախված հայ հոգիին պաստառներն են անոր էջերը՝ արյունու շրջանակով» (էջ 327):

Անցել են խաժամուժ օտար բռնակալները՝ իրենց հետեւց թողնելով սով ու արձավիրք, արյուն ու արցունք, բայց մնացել է անմիտ մեր ժողովրդի ողին, մնացել են Գառնին ու Գեղարդը. «Գեղարդն ու Գառնին, — գրում է բանաստեղծը, — տվին ինծի հանջնալ հայ մարդը այնպես ինչպես ոչ մեկ մատյան կամ բանավոր վկայություն կրցեր էր տալ մինչև այն ատեն» (էջ 328):

Հայաստանի ադյունաբերական, գյուղատնտեսական հզոր վերելիին ծանոթանալու համար բանաստեղծ՝ հեղինակը մի քանի այցելովիուններ է կատարում Հայաստանի մի շարք փարրիկանները, գործարաններն ու համայնական դաշտերը: Նա այցելում է Քանաքեռ հիդրո-էլեկտրակայսենը, «Արարատ» գործարանը, կեննականի Տեղավոր կոմիտենար, Մահ կոմիտենարը, լինում է Արտաշատի կուտանսությունում և այլն:

Ամենուրեք նրան շրջապատում են նոր կինցաղի, նոր համոզմունքի տեր մարդիկ. նրանք բոլորն էլ, մեծից փոքր, պատմում են նորեկ հյուրին իրենց աշխատանքային մեծամեծ հաջողությունների մասին, նրանցից յուրաքանչյուրը իր աշխատանքի մեջ մի-մի ստեղծագործ խանդավառ մարտիկ է, մի նոր հերոս:

«Օտարուրյան ուրվականը» վերնագրի տակ հեղինակն իր վերչին այցելություններն է կատարում Հայրենի երկրում: Ուշագրավ է էջմիածին—Զվարթնոց մի քանի այլ գրողների հետ նրա կատարած ճանապարհորդության նկարագրումը: — Ահա՝ հայության հնագարյան Տաճարը՝ էջմիածինը: Սրտի անհուն թղթոցով է մտնում բանաստեղծը նրա դոնից, մի պահ, միստիկական վերասլացիկովիմը, նրա հոգում վերակենանանում է անցյալը՝ լուսեղեն ու խնկարուցը. «Դարերու խորհրեն բնած ի՞նչ հեքեր լսեր էին մեր պապերուն շրթումքներովը՝ դրոշմված այդ քարերը, ու փաթթվեր էին անոր սյուներուն ի՞նչ նայմաժներ՝ որոնց լուսեն Տաճար մը կար հիմա մի՛ր ալ աշքերուն մեջ» (էջ 445): Հեղինակը համոզված է, որ

էջմիածինը հայ ժողովրդի հավաքականության հիմքն է, նրա «հոգեոր տունը», և որ կաթոլիկին «կիուրհրդանշներ հայության հոգին իսկ» (էջ 446): Ու «Ճշմարիտ ամեն հայ կլսի էջմիածնի զանգերուն ձայնը իր սիրտին մեջ, կճանշնա զայն իրբե հարազատ ու հավաարիմ ուղեցույց ու կատանորդվի անկե» (էջ 446):

Սրտառուշ է ու անմոռանակի հայրենակը բանաստեղծի հանդիպումը Ամենայն Հայոց վեհափառ Հայրապետի հետ: Հեղինակը այդ փոքրիկ, կարճատ հանդիպման իսկ ժամանակ կարողանում է հոգեբանորեն ըմբռնել Վեհափառ Հայրապետի հոգեկան այն բարեմասնությունը, որոնք աիսկան են նրա անձի ու հոգու համար: Հանձնին Վեհափառ Հայրապետի հեղինակը տեսնում է լայնախոհ ողու տեր, սիրու և միաբանության հորդոր բերնին, իր ժողովրդի միշտ հոգացող ու համագրաբուղ կուսափրշի արժանաբնակի Գահակալին: «Ամենայն Հայոց Հայրապետեն բաժնիցաց ես՝ հպարտ ավելի և զորացած» (էջ 448), — վերջացնում է հեղինակի կրտսերը:

Գրքի վերջին՝ վեցերորդ վլուսն է «Պահպատառյուն վերստին»: Կոշմարոյին ծանրությամբ հեղինակի սրտում նստել է Հայրենիքից բաժանվելու ուրվականը՝ ի՞նչպես բաժանվել, ի՞նչպես թողնել հայրենի երկիրը, երբ վիտես, որ դու էլ նրա մի զափակնես, մի մաս կա քո մի մեջ հայրենի հողից, տեսնել ես նրա վերածունդը, այդ բորսից հետո թողնել-հետանալ պանդասովյան անհարազատ գիրկը՝ շատ է դժվար: Մի փոքր հետո՝ հրաժեշտի վերջին խոսքեր, սրտառուշ բաժանում երևանից: Ու հեղինակը գրում է. «Հոգիս կարծես կապված ըլլար Երևանին՝ անհամար լարերով: Որքան կհեռանայինք, կձգվեին այդ լարերը ավելի՝ կլերածվեին անխզելի ցանցի մը ու կառնեին դիս իրենց պարույրին մեջ: Երևանն էր անցեր իմ հության, թե անբաժանելի մաս մը իմձմե ձուլվեր էր անոր հետ: Ժամանակն ու հոռավորությունը պիտի չկարենային փարատելի զայն, կորզել ինձմե» (էջ 467):

Վերաբարձի ճանապարհին հուզիչ խորհրդագություններ ունի «Մայր Արաքսի հետ: Հեղինակը բանաստեղծական գեղեցիկ համեմատություն է կատարում Արաքսի և Հայոց պատմության միջև և բացահայտում նրանց նմանությունները: Սակայն բանաստեղծի սիրաը ուրախ է, ցնծում է նա, որովհետեւ իր «հոգիի բիբերովը տեսել է, որ արդեն հարավեները հաշտվել են մեղ հետ. «...իզու լի է փառել զանոնք կերպարանիք մը մեջ քարեղին: Շոնչ են անոնք ու սպի: ...Ոգին են անկողոպաւու առատության, Արտաշատի այգիներուն մեջ ու դաշտերուն Ծի-

բակի: ...Ներկա են անսնք ամեն տեղ և ամեն ժամ, Հանքերուն մեջ ու գործարաններուն, Ալավերդին մինչև Ղափան, Լենինականին մինչև Նոր-Արաքլիք ու Երևան: ...Հայոց վերածնած Հայրենիքին են հարալեզները, որ սրբը են դարավոր անեծքը մեր պատմության ճակատեն» (էջ 475—476):

Վահե-Վահյանի գիրքը ավարտվում է մի սիմվոլիկ վերջարանով, որը իմաստավորված է Հայրենիքի միասնականության գաղափարը: Հեղինակի հայրենասիրական վառ պաթուով դրված խոսքերը այսօր էլ հնչում են որպես խոսխու ու զգուշացուցիչ մարտակոչ սիրուրահայության համար:

«Հայոց Հայրենիքն է պազանը հայ հանեարին և ուժին:

Հայը տեր է և իշխան՝ իր նողին վրա միայն:

Մի՛ հավատաք: Զկու Հայրենիք՝ առանց նողի, և ազգ՝ առանց Հայրենիքի»:



Որո՞նք են զրբի էական արժանիքները:— Ամենից առաջ, Հեղինակը էպիկական լայն կտավի վրա կարողացել է ընդգրկել իս առջև զրած ամրազ նյութը:— Նրա աշքից չի միավոր ո՞չ մի մանրութ: Առօրյա ամենափոքր երևույթները նա կարողանում է խորը և համոզեցուցիչ կերպով ընթանել և նրանց վրա կառուցել իր երակացությունները: Հեղինակը նրազգաց է, զգայուն և խորհուրդ:

Գրքի սկզբից մինչև վերջ, կարմիր թելի պես, անցնում է Հեղինակի հայրենասիրական շոնչը: Առանց երևակայությունների և շափազանցությունների գիրկն ընկնելու, նա ականատեսի անաշառ աշքով սալիս է այն, ինչ որ իրոք կա իր Հայրենիքում: Հեղինակի խանդալառությունն ու ոգևորությունը իգուր չեն, նրանք բխում են ոհալ իրականությու-

նից— նրանք ճշմարփա հալրենասերի սրաի բարախլունն են. Հեղինակը ո՞չ միայն տեսնում է իր Հայրենիքի այսօրվա անսահման վերելքն ու առաջընթացը, այլև հենց այդ ներկայի մեջ տեսնում է իր Հայրենիքի շքեղ ու փառավոր ատագան:

Գրքի ամեն մի վերնագրի տակ կարելի է հանդիպել ուշագրավ նկարագրություններ: Հեղինակը վարպետ գրչով տիպականացնում է Հայրենիքում իր հանդիպած մի շարք մտավորականների: Այսպիսիներից են, օրինակ, Ավետիք Խսահակյանը, Դերենիկ Դիեմիրձյանը, Ստեփան Զորյանը, Նարիկ Զարյանը, և այլուր գրիգորյանը, Հրաչյա Քոչարը, Շիրազը և ուղիշները:

Լեզուն ճոխ է, պատկերավոր, բանաստեղծական: Շատ տեղեր ուղղակի նա վեր է ածվում արձակ բանաստեղծության: Բնության պոետական շնչով գրված զմայլելի նկարագրությունները գրքին տալիս են առանձին երանդ, հասցնելով այն գեղարվեստական լայն կտավի գործերի աստիճանին: Գիրքը կարգացվում է մեծ հետաքրքրությամբ: Հեղինակը կարողացել է նյութը զասավորել այնպես, որ առաջացըրել է պատկերների և տպավորությունների այլազան հաջորդականություն, որը և առաջ է բերում ավելի մեծ հետաքրքրություն:

Գիրքը ծանրաբեռնված չէ ավելորդ թվերով և զիտական խրթին մեկնաբանություններով: Կազմված է այն վերին աստիճանի խնամքով: Պատկերները ընարված են գեղագետի նուրբ ճաշակով:

Այսպիսով, Վահե-Վահյանի «Հայրակենեւու հաշտուրյունը» գիրքը զերծ շնչով գրված, հայրենակարուտ մարդու տեհնչերով լեցուն, սփյուռքահայ զրականության լավագույն երերից է և ողջունելի է ըստ ամենայնի:

ՌՈՒԲԵՆ ՍԱՐԿԱԳՈԳ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

